ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ԲԵԼՄԵՏ ՍՊԸ-ն ՉՀ-ԷԱՃԱՊՁԲ-2023/5 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
2	Նստարանի ոտքերը պետք է պատրաստված լինի (ՀԿ-20 մակնիշի) թուջե ձուլվածքից, ոտքերի ներքնամասում առկա են 8 մմ տրամագծով անցքեր գետնին ամրացնելու համար, հղկված, պատված նախաներկով և ներկված յուղաներկով (սև գույն), քաշը՝ 52 կգ: Նստարանի մեջքի մասը նույնպես պետք է պատրաստված լինի (ՀԿ-20 մակնիշի) թուջե ձուլվածքից, մեջքի վրայի պատկերը նախապես համաձայնեցվում է Պատվիրատուի հետ և պետք է լինի Չարենցավան քաղաքի խորհրդանիշ հանդիսացող «Գանգրահեր տղա» արձանի ձուլվածքը, մեջքի ներքևի մասում պետք է լինի ձուլվածք «ՉԱՐԵՆՑԱՎԱՆ» տեղանունով (տառի բարձրությունը 5 սմ), հղկված, պատված նախաներկով և ներկված յուղաներկով (սև գույնով), տառերը ներկված ոսկեգույն, քաշը՝ 18 կգ: Նստարանի մեջքի մասը և նստատեղը պատված են հաճարի փայտից (խոնավությունը մինչև 7%), երանգավորված և լաքապատված տախտակամածային, լաքով (փայտի երանգը համաձայնեցվում է պատվիրատուի հետ): Նստատեղը բաղկացած է փայտյա 5 ձողերից 1800×60×40 մմ չափսերով, մեջքի վերևի մեջտեղի մասը բաղկացած կոր, կողքային մասերը ուղղահայաց և հորիզոնական դիրքով փայտյա ձողերով 60×40 մմ: Ոտքերից դեպի նստատեղի մեջտեղի մասը և մեջքի մասից դեպի նստատեղ ամրացված է մետաղյա ձողեր նստարանին դիմացկունություն հաղորդելու համար: Նստարանի չափսերը՝ երկարությունը՝ 1800 մմ, մեջքի բարձրությունը՝ 800 մմ, նստատեղի լայնությունը՝ 450 մմ, նստատեղի բարձրությունը՝ 420 մմ, թևի հենակի բարձրությունը՝ 600 մմ: Նստարանները մատակարարվում են հավաքված և փաթեթավորված պոլիէթիլենային թաղանթով: Երաշխիքային ժամկետը՝ հանձնելու պահից առնվազն 365 օրացուցային օր:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО БЕЛМЕТ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՉՀ-ԷԱՃԱՊՁԲ-2023/5 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
2	